

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱՌՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՇՈՏՅԱՆ

“01” փետրվարի 2013թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ՇՐՋԱՆԱՌՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ / ԴՇՀ/ 2012թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ**

2012թ. ընթացքում Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները:

1. Հունվար-փետրվար ամիսներին դասագրքերի բաշխման վերաբերյալ մարզպետարանների կրթության վարչությունների ներկայացրած հաշվետվությունների հիման վրա կազմվել է 2011-2012 ուսումնական տարվա տարեկան հաշվետվությունը՝ ըստ յուրաքանչյուր անուն դասագրքի բաշխման քանակների:
2. 2012թ. օգոստոս ամսին իրականացվել են հանրակրթական դպրոցների “Հայրենագիտություն 5”, “Բնագիտություն 5-6”, “Կենսանաբանություն 7-8”, “Ֆիզիկա 7-9”, “Քիմիա 7-9”, “Հայոց պատմություն 6-7”, “Հայոց պատմություն 8-9”, “Համաշխարհային պատմություն 6-7”, “Համաշխարհային պատմություն 8-9”, “Հասարակագիտություն 8-9”, “Աշխարհագրություն 6”, “Աշխարհագրություն 7-8” դասագրքերի և

ուսուցչի ձեռնարկների հրատարակման մրցույթի բացման, գնահատման և հաստատման աշխատանքները:

Յուրաքանչյուր առարկայից ներկայացրած դասագրքերի գնահատման համար գործել են երկու տարբեր հանձնաժողովներ՝ համապատասխանաբար կազմված գիտակրթական ու բուհական հաստատությունների ներկայացուցիչներից և ուսուցիչներից:

3. ՀՀ ԿԳ նախարարի 30.11.12թ.թիվ 1094-Ա/Ք “ 2013-2014 ուսումնական տարվա մրցույթով հաղթած դասագրքերը փորձարկելու մասին” հրամանով նախատեսված դասագրքերի փորձարկման համար նախատեսված 90 դպրոցների տնօրենների համար անց է կացվել սեմինար, որի ընթացքում պարզաբանվել են հանրակրթական դպրոցների “Հայրենագիտություն 5”, “Բնագիտություն 5-6”, “ Կենսանաբանություն 7-8”, “Ֆիզիկա 7-9”, “Քիմիա 7-9”, “Հայոց պատմություն 6-7”, “Հայոց պատմություն 8-9”, “Համաշխարհային պատմություն 6-7”, “Համաշխարհային պատմություն 8-9”, “Հասարակագիտություն 8-9” , “Աշխարհագրություն 6”, “Աշխարհագրություն 7-8” դասագրքերի փորձարկման աշխատանքների հինախնդիրներն ու մեթոդները: Փորձարկման ենթակա դասագրքերն ու փորձարկման մեթոդական ուղեցույցները տրվել են համապատասխան դպրոցներին: Դասագրքերի փորձարկումը դպրոցներում կիրականացվի մինչև 2013թ. մայիս ամիսը:

4. Մրցույթով անցած դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների էլեկտրոնային տարբերակները տեղադրվել են Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի /ԿՏԱԿ/ համապատասխան կայքում: Դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների վերաբերյալ ստացված դիտողություններն ու առաջարկները կտրամադրվեն համապատասխան հրատարակչություններին՝ դասագրքերի վերջնական տարբերակները պատրաստելու համար:

5. 2012թ. հունիս ամիսին 2011թ.մրցույթով անցած 11 անուն՝ “Մայրենի 6”, “Մաթեմատիկա 6”, “Ինֆորմատիկա7”, “Հայոց լեզու 8”, “Գրականություն 8”, “Հանրահաշիվ 8”, “Երկրաչափություն 8”,

“ Երաժշտություն 6”, ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի “Ինֆորմատիկա 12”, ընդհանուր հոսքի “ Ինֆորմատիկա 12” և հումանիտար հոսքի “ Ռուսաց լեզու 12” դասագրքերի վերջնական տարբերակները ներկայացվել են Կրթության ազգային ինստիտուտ՝ մասնագիտական կարծիքի, որի հիման վրա դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների լրամշակված տարբերակները հաստատվել են ՀՀ ԿԳ նախարարի կողմից՝ որպես հիմնական դասագրքեր:

6. Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի համապատասխան հրամանների պայմանագրեր են կնքվել դասագրքերի մրցույթում հաղթած հրատարակչությունների հետ: Հուլիս-օգոստոս ամիսներին իրականացվել է 2012-2013 ուսումնական տարվա վերոնշյալ 11 անուն դասագրքերի հրատարակման և բաշխման աշխատանքները:

7. ԴՇՀ-ի մարզային կորոդինատորների կողմից ամփոփվել են դպրոցներից ստացված 2012-2013 ուսումնական տարվա դասագրքերի հայտերն ու հանձնարարականները, որոնց հիման վրա դպրոցների բանկային հաշիվներից գումարները փոխանցվել են համապատասխան հրատարակչություններին:

8. 2012թ. ընթացքում ԴՇՀ-ի աշխատակազմը մեթոդական օգնություն և ուսումնասիրություններ կազմակերպելու նպատակով այցելել է հանրապետության մարզեր, հանդիպումներ ունեցել դպրոցների տնօրենների, գրադարանավարների հետ, անցկացրել սեմինարներ և խորհրդակցություններ: Որոշ դպրոցներում աշխատանք է տարվել նաև ծնողների և աշխատանքային կոլեկտիվների հետ:

9. Ուսումնական տարվա ընթացքում ԴՇՀ-ի աշխատակազմը աշխատանքներ է տարել դպրոցների կողմից դասագրքերի դիմաց համապատասխան ներդրումներն ապահովելու ուղղությամբ՝ դասագրքերի հրատարակման շարունակականությունն ապահովելու նպատակով: Արդյունքում, 2012-2013 ուսումնական տարում դասագրքերի դիմաց

ներդրումների հավաքագրումը հանրապետության կտրվածքով կազմել է մոտ 99 տոկոս (ըստ մարզերի հաշվետվությունը կցվում է, աղյուսակ 1):

11. Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամը կատարել է յուրաքանչյուր ուսումնական հաստատությանը սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին անվճար տրվող դասագրքերի դիմաց փոխհատուցման վճարման ենթակա գումարների հաշվարկը և ներկայացրել ՀՀ ԿԳ նախարարություն: Արդյունքում պետական ուսումնական հաստատություններին պետական բյուջեի միջոցներից հատկացվել է 120մլն.դրամի չափով փոխհատուցում:

12. 2012թ. ընթացքում՝ ըստ գործող կարգի, HSBC Հայաստան բանկի կողմից 2 անգամ տրամադրվել են դպրոցների ընթացիկ վճարումների բանկային քաղվածքները: Տարվա ընթացքում ստուգվել է դպրոցների բանկային քաղվածքների համապատասխանությունը և հայտնաբերված սխալ փոխանցումները ուղղվել են:

13. SCS ներդրման ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ գործողությունները.

- Ծրագրի գործընկեր “ Արդշինինվեստ” բանկի հետ մշակվել է դպրոցի կողմից որպես իրավաբանական անձ ծրագրում ներգրավելու դեպքում ծրագրի իրականացման տարբերակը՝ ի դեմս ֆակտորինգի մեխանիզմի մշակման և հաստատման: Այս բանկային գործիքի հաստատումից հետո միայն հնարավոր է եղել ծրագրի իրականացումը նաև այն դպրոցներում, որոնք ցանկություն էին հայտնել ծրագրին մասնակցել շրջիկ դասարաններ հիմնելու տարբերակով:
- 2012 թվականի ընթացքում ներթուքային դասարանների ստեղծման նպատակով համապատասխան աշխատանքներ են իրականացվել և սարքավորումներ են տրամադրվել են դպրոցներին. Երևանի թիվ 78, 198, 186 դպրոցներին և ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի հենակետային վարժարանին: Երևանի թիվ 78 դպրոցում

ներթուքային դասարանը հիմնվել է ծնողական մասնակցության հիմքով՝ որպես առանձին դասարան, որում յուրաքանչյուր ծնող իր երեխայի համար ձեռք է բերել անհատական ներթուք: Մյուս երեք դպրոցներում հիմնվել են շրջիկ դասարաններ:

- Ծրագրի իրականացման առաջին՝ փորձնական փուլի արդյունքներով վերամշակվել է ՀՀ դպրոցներում նորարարական տեխնոլոգիաների ներդրման ծրագիրը, որը ս.թ. դեկտեմբերին ուղարկվել է ՀՀ վարչապետին:
- 2012 թվականի դեկտեմբերին սկսվել են նաև ծրագրի իրականացման երկրորդ փուլի իրականացման աշխատանքները, որի շրջանակներում կազմակերպվել են հանդիպումներ ՀՀ տարբեր մարզերի դպրոցների հետ, նրանց են տրամադրվել ծրագրում ներգրավելու համար հայտի և դիմումի ձևերը:
- ՏՀՏ ծրագրում ներառված դպրոցներին տրամադրված ներթուքային դասարանների արդյունավետ օգտագործման նպատակով ԴՇՀ-ն նախաձեռնել է դասագրքերի թվայնացման և դրանք ներթուքներում տեղադրելու գործընթաց: Մասնավորապես կազմվել է թվայնացման ենթակա դասագրքերի ցանկը և մշակվել աշխատանքների կատարման ժամանակացույցը:
Մասնագիտացված կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր 78 անուն դասագրքերի թվայնացման նպատակով: Թվայնացման աշխատանքները ընթացքի մեջ են:

14. ԴՇՀ-ն 2012թ. մասնակցել է հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/ ստանալու համար վերապատրաստումներ իրականացնելու նպատակով ՀՀ ԿԳՆ-ի հայտարարած վերապատրաստող կազմակերպությունների մրցույթին: Մրցույթի արդյունքում կազմակերպությանը տրվել է իրավունք

իրականացնելու այդ վերապատրաստումները, որի շրջանակում վերապատրաստվել է 72 անձ:

15. 2012թ. հուլիս – օգոստոս ամիսներին ԴՇՀ-ն ուսուցիչներին ատեստավորմանը նախապատրաստելու նպատակով իրականացրել է հանրակրթական դպրոցների շուրջ 864 ուսուցիչների վերապատրաստում:

16. 2012թ. նոյեմբերից սկսվել է 2012-2013 ուստարվա դասագրքերի վերաբերյալ ՀՀ ԿԳՆ-ի, մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի կողմից դպրոցների հաշվետվությունների ընդունման գործընթացը: Դրանք ամփոփելուց հետո հաշվետվությունները ներկայացվել են ԴՇՀ: Ներկայումս աշխատանքներ են տարվում հանրապետական ամփոփ հաշվետվությունը կազմելու և 2012-2013 ուստարվա դասագրքերի վերարտադրության ներդրումային գումարներն ապահովելու ուղղությամբ: 2013թ. հունվարի 1-ի դրությամբ ըստ մարզերի դասագրքերի դիմաց կատարված ներդրումների մասին տեղեկանքը կցվում է (Աղյուսակ 2):